Սպառողական ծրագրեր

Նահանգային և դաշնային ծրագրեր, որոնք նախատեսված են ձեր կոմունալ վճարումների կառավարման գործում ձեզ օգնելու համար

Աջակցություն ձեր հաշիվները վճարելու համար

Pacific Gas and Electric Company-ն (Գազի և էլեկտրաէներգիայի խաղաղօվկիանոսյան ընկերություն), Southern California Edison-ը (Էդիսոն Հարավային Կալիֆոռնիա), San Diego Gas & Electric Company-ն (Սան Դիոգոյի գազի և էլեկտրաէներգիայի ընկերություն) և Southern California Gas Company-ն (Հարավային Կալիֆոռնիայի գազի ընկերությունը) կարող են ունենալ վճարման աջակցության ծրագրեր և վճարման պլաններ, որոնք կօգնեն ձեզ կառավարել ձեր հաշիվները: Ուղիղ կապ հաստատեք կոմունալ ծառայություններ մատուցող ընկերության հետ՝ օգտագործելով ձեր հաշվի առաջին էջում

տպագրված հաճախորդների սպասարկման հեռախոսահամարը:

Եթե օգնության կարիք ունեք վճարումների պլանի շուրջ բանակցություններ անցկացնելու հարցում, դիմեք Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովի (California Public Utilities Commission, CPUC) սպառողների հարցերով մասնաճյուղ՝ 1-800-649-7570 հեռախոսահամարով: Ջրամատակարարման ընկերությունների բաժանորդները կարող են իրավասու լինել վճարման պլանների համար, երբ կանգնում են ջրամատակարարման ծառայության անջատման

վտանգի առաջ: Բացի այդ, բազմաթիվ ավելի խոշոր ջրամատակարարման ընկերություններ առաջարկում են վճարման պլաններ հատուկ զինվորական ընտանիքների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր ջրամատակարարման ընկերությանը:

Կալիֆոռնիայի հանրային կոմունալ ծառայությունների հանձնաժողովը (CPUC) ցանկանում է, որ դուք տեղյակ լինեք որ կան բազմաթիվ նահանգային և դաշնային ծրագրեր, որոնք նախատեսված են ձեր կոմունալ վճարումները կատարելու հարցում ձեզ օգնելու համար: Այս ծրագրերը ներառում են.

California LifeLine (Կալիֆոռնիայի փրկօղակ)

Deaf and Disabled Telecommunications Program (DDTP, Խուլ և հաշմանդամություն ունեցող անձանց հեռահաղորդակցության ծրագիր)

California Alternate Rates for Energy (CARE, Կալիֆոռնիայի էլեկտրաէներգիայի այլընտրանքային սակագներ)

Energy Savings Assistance Program (Էներգախնայողության աջակցության ծրագիր)

Low Income Home Energy Assistance Program (LIHEAP) (Ցածր եկամուտ ունեցող տների էլեկտրաէներգիայի աջակցության ծրագիր)

Family Electric Rate Assistance (FERA, Էլեկտրաէներգիայի ընտանեկան սակագների աջակցության համակարգ)

Medical Baseline (Բժշկական ելակետ)

Water Company Assistance (Ջրամատակարարման ընկերության աջակցություն)

Այս սպառողական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար՝

ԱՅՑԵԼԵՔ՝ www.cpuc.ca.gov/team-and-changes

ԷԼ· ՆԱՄԱԿ ՈՒՂԱՐԿԵՔ՝ cabteamandchanges@cpuc.ca.gov

California Public Utilities Commission

505 Van Ness Ave.
San Francisco, CA 94102

800-848-5580 (Toll Free)
cpuc.ca.gov

0924

Կապի աջակցություն

California LifeLine (Կալիֆոռնիայի փրկօղակ)

California LifeLine ծրագիրը իրավասու տնային տնտեսություններին առաջարկում է քաղաքային կամ բջջային հեռախոսի ծառայությունների իջեցված սակագներ: Տնային տնտեսությունները կարող են որակավորվել երկու եղանակով՝ (1) եկամտով կամ (2) մասնակցելով հանրային աջակցության որակավորման ծրագրին:

(1) Եկամտով: Այն տնային տնտեսությունները, որոնց ընդհանուր եկամուտը նշված սահմաններում կամ դրանից ցածր է գտնվում, կարող են իրավասու լինել աջակցության համար.

1 անդամ	23,400 ԱՄՆ դոլար
2 անդամ	31,700 ԱՄՆ դոլար
3 անդամ	40,000 ԱՄՆ դոլար
4 անդամ	48,400 ԱՄՆ դոլար
Յուրաքանչյուր լրացուցիչ անդամ	8,400 ԱՄՆ դոլար

եկամտի սահմանաչափերը գործում են 2024 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը

(2) Մասնակցելով որակավորված հանրային աջակցության ծրագրին: Տնային տնտեսությունները կարող են նաև որակավորվել աջակցություն ստանալու համար, եթե տնային տնտեսության առնվազն մեկ անդամ մասնակցում է համապատասխան պետական աջակցության ծրագրին: Ծրագրերի ցանկի համար այցելեք www.cpuc.ca.gov/LifeLine հասցեով:

Enhanced LifeLine for Tribal Lands-ը (Ընդլայնված փրկօղակ ցեղական տարածքների համար) դաշնային մակարդակով ճանաչված ցեղական տարածքում ապրող իրավասու տնային տնտեսություններին տրամադրում են լրացուցիչ զեղչեր:

Դիմելու համար զանգահարեք ձեր հեռախոսային ընկերություն կամ ստացեք լրացուցիչ տեղեկություններ՝ զանգահարելով California LifeLine կենտրոն 866-272-0349 հեռախոսահամարով:

Deaf and Disabled Telecommunications Program (DDTP, Խուլ և հաշմանդամություն ունեցող անձանց հեռահաղորդակցության ծրագիր)

DDTP-ն տրամադրում է մասնագիտացված և մատչելի հաղորդակցման սարքավորումներ և ծառայություններ լսողական, տեսողական, շարժողական, ճանաչողական և խոսքային հաշմանդամություն ունեցող անձանց համար.

California Telephone Access Program (Կալիֆոռնիայի հեռախոսային հասանելիության ծրագիր)

Տրամադրում է մասնագիտացված և հասանելի կապի սարքավորումներ այն անձանց, ովքեր ունեն հավաստագրում, որ դժվարանում են օգտագործել հեռախոս:

Սարքավորումներն անվճար հասանելի են իրավասու սպառողներին:

California Relay Service (CRS) (Կալիֆոռնիայի միջնորդավորված հաղորդակցման ծառայություն)

Տրամադրում է հատուկ վերապատրաստված օպերատորներ, որոնք հեշտացնում են հեռախոսային խոսակցությունները խուլ, վատ լսողություն կամ խոսքի խանգարում ունեցող անձանց և այն մարդկանց միջև, ում հետ ցանկանում են շփվել:

Real-Time Text (RTT) (Իրական ժամանակում տեքստային հաղորդագրություններ)

Տրամադրում է հեռախոսային խոսակցությունների ընթացքում տեքստային հաղորդագրությունների միջոցով իրական ժամանակում հաղորդակցվելու հնարավորություն: Նախատեսված

Real Conference Captioning (RCC, Իրական ժամանակում ենթագրեր)

Տրամադրում է հատուկ վերապատրաստված օպերատորներ, որոնք հեշտացնում են հեռախոսային խոսակցությունները խուլ, վատ լսողություն կամ խոսքի խանգարում ունեցող անձանց և այն մարդկանց միջև, ում հետ ցանկանում են շփվել:

Speech-to-Speech Relay Service (STS, Բանավորից բանավոր միջնորդավորված հաղորդակցման ծառայություն)

Տրամադրում է հատուկ վերապատրաստված օպերատորներ, որոնք հեշտացնում են հեռախոսային խոսակցությունները խուլ, վատ լսողություն կամ խոսքի խանգարում ունեցող անձանց և այն մարդկանց միջև, ում հետ ցանկանում են շփվել:

Voice Option Program (VO, Ձայնի ընտրանքային ծրագիր)

Կալիֆոռնիայի վերականգնողական վարչությունը՝ խուլ և հաշմանդամություն ունեցող անձանց հեռահաղորդակցության ծրագրի հետ համատեղ, խոսք գեներացնող սարքեր է տրամադրում Կալիֆոռնիայի այն բնակիչներին, ովքեր չեն կարողանում կամ դժվարանում են խոսել:

Դիմելու համար կապվեք DDTP-ի հետ 1-800-806-1191 հեռախոսահամարով (ձայնային) կամ անգլերեն TTY՝ 1-800-806-4474, իսպաներեն TTY՝ 1-844-867-1135, ֆաքսով՝ 1-800-889-3974, կամ առցանց՝ info@caconnect.org հասցեով:

Energy Assistance (Էլեկտրաէներգիայի աջակցություն)

California Alternate Rates for Energy (CARE, Կալիֆոռնիայի էլեկտրաէներգիայի այլընտրանքային սակագներ)

CARE ծրագիրը տրամադրում է 20-35% զեղչ էլեկտրաէներգիայի և բնական գազի վարձավճարների համար այն հաճախորդներին, որոնց

ընտանիքի ընդհանուր եկամուտը հավասար կամ ցածր է հետևյալ սահմանաչափերից.

1-ից 2 անդամ	40,880 ԱՄՆ դոլար
3 անդամ	51,640 ԱՄՆ դոլար
4 անդամ	62,400 ԱՄՆ դոլար
5 անդամ	73,160 ԱՄՆ դոլար
6 անդամ	83,920 ԱՄՆ դոլար
7 անդամ	94,680 ԱՄՆ դոլար
8 անդամ	105,440 ԱՄՆ դոլար
Յուրաքանչյուր լրացուցիչ անդամ	10,760 ԱՄՆ դոլար

եկամտի սահմանաչափերը գործում են 2024 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը

Լրացուցիչ մանրամասների կամ գրանցվելու համար դիմեք ձեր կոմունալ ծառայությունների մատուցող ընկերությանը:

Energy Savings Assistance Program (Էներգախնայողության աջակցության ծրագիր)

Էներգախնայողության աջակցության ծրագիրն անվճար ծառայություններ է մատուցում ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններին, որոնք համապատասխանում են եկամտի CARE ուղեցույցին: Մատուցվող ծառայություններից մի քանիսը ներառում են ձեղնահարկի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ սառնարաններ, էներգաարդյունավետ վառարաններ, դռների և պատուհանների ջերմամեկուսացում, ջուր խնայող ցնցուղներ, ջրատաքացուցիչի ծածկոցներ և դռների և շինությունների պատնեշների վերանորոգում, որոնք նվազեցնում են օդի ներթափանցումը: Լրացուցիչ մանրամասների կամ գրանցվելու համար դիմեք ձեր կոմունալ ծառայությունների մատուցող ընկերությանը:

Low Income Home Energy Assistance Program (LIHEAP) (Ցածր եկամուտ ունեցող տների էլեկտրաէներգիայի աջակցության ծրագիր)

Կալիֆոռնիայի հանրային ծառայությունների և զարգացման վարչությունը (CSD) ղեկավարում է ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին էներգիայի մատակարարման, էներգետիկ ճգնաժամի միջամտության և անբարենպաստ եղանակային պայմաններից պաշտպանելու դաշնային ծրագրերը, որոնք հայտնի են որպես LIHEAP: Այս ծրագրերը ֆինանսավորվում են դաշնային դրամաշնորհների միջոցով՝ ջերմամեկուսացման ծառայություններ և կանխիկ միջոցներ տրամադրելու համար, որոնք կօգնեն որակավորված հաճախորդներին վճարել իրենց էլեկտրաէներգիայի վճարները: Լրացուցիչ տեղեկությունների համար կապվեք CSD-ի հետ 800-433-4327 հեռախոսահամարով:

Family Electric Rate Assistance (FERA, Էլեկտրաէներգիայի ընտանեկան սակագների աջակցության համակարգ)

Ընտանիքները, որոնց եկամուտը փոքր-ինչ գերազանցում է CARE ծրագրի սահմանները, կարող են որակավորվել FERA ծրագրի համար, որը թույլ է տալիս էլեկտրաէներգիայի որոշ ծախսեր հաշվարկել ավելի ցածր սակագնով: Ընտանիքի եկամուտների իրավասության պահանջները հետևյալն են.

3 անդամ	51,641-64,550 ԱՄՆ դոլար
4 անդամ	62,401-78,000 ԱՄՆ դոլար
5 անդամ	73,161-91,450 ԱՄՆ դոլար
6 անդամ	83,921-104,900 ԱՄՆ դոլար
7 անդամ	94,681-118,350 ԱՄՆ դոլար
8 անդամ	105,441-131,800 ԱՄՆ դոլար
Յուրաքանչյուր լրացուցիչ անդամ	10,760-13,450 ԱՄՆ դոլար

եկամտի սահմանաչափերը գործում են 2024 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի մայիսի 31-ը

FERA ծրագիրը հասանելի է Pacific Gas and Electric Company, Southern California Edison և San Diego Gas and Electric ընկերությունների միջոցով: Լրացուցիչ մանրամասների կամ գրանցվելու համար կապ հաստատեք ձեր կոմունալ ծառայություններ մատուցող ընկերության հետ:

Medical Baseline (Բժշկական ելակետ)

Medical Baseline ծրագրում ընդգրկված սպառողները բնական գազի և էլեկտրաէներգիայի համար վճարում են իրենց կոմունալ ընկերության կողմից առաջարկվող ամենացածր տնային սակագները: Այս ծրագիրը նախատեսված է այն սպառողների համար, որոնք ապավինում են կյանքի աջակցության սարքավորումներին, կամ նրանց, ովքեր ունեն կյանքին սպառնացող հիվանդություններ կամ իմունային համակարգի վատթարացում: Ծրագիրը եկամտից կախված չէ:

Medical Baseline ծրագիրը հասանելի է Pacific Gas and Electric Company, Southern California Edison, San Diego Gas & Electric Company և Southern California Gas Company ընկերությունների միջոցով: Լրացուցիչ մանրամասների կամ գրանցվելու համար կապ հաստատեք ձեր կոմունալ ծառայություններ մատուցող ընկերության հետ:

Ջուր

Ջրամատակարարման ծրագրեր

CPUC-ն կարգավորում է մասնավոր սեփականություն հանդիսացող ջրամատակարարման ընկերությունները, որոնք կարող են տրամադրել աջակցության հատուկ ծրագրեր, որոնք յուրահատուկ են յուրաքանչյուր ընկերության սպասարկման տարածքում և ունեն եկամտի տարբեր սահմանաչափեր: Ճշտեք ձեր ջրամատակարարման ընկերության հետ՝ սպառողական ծրագրերի մասին իմանալու համար: Եկամտի իրավասության սահմանաչափերի մասին տեղեկությունների և նման ծրագրեր առաջարկող ջրամատակարարկման ընկերությունների ցանկին ծանոթանալու համար այցելեք www.cpuc.ca.gov/ water-assistance:

California Public Utilities Commission